

ՔԱՂՎԱԾՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014Թ. ԱՊՐԻԼԻ 10-Ի N 14 ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԻՑ

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հավանություն տալ Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգին՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝
 - 1) հիմք ընդունելով սույն հայեցակարգը՝ երկամսյա ժամկետում մշակել կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ իրավական ակտերի նախագծեր և միջոցառումների ժամանակացույց, այդ թվում՝ առաջարկել վերանայել Հայաստանի Հանրապետության Նախագահի 2004 թվականի հունիսի 1-ի ՆՀ-100-Ն հրամանագիրը, դրանք քննարկել շահագրգիռ մարմինների հետ և ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ:
 - 2) հիմք ընդունելով սույն հայեցակարգը՝ երկամսյա ժամկետում շահագրգիռ պետական մարմինների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, միջազգային կառույցների փորձագետների առաջարկությունների հիման վրա մշակել հակակոռուպցիոն ռազմավարության նախագիծ և այն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ:
 - 3) մինչև 2014 թվականի հուլիսի 15-ը կոռուպցիայի դեմ պայքարի ձևավորվելիք խորհրդի քննարկմանը ներկայացնել հակակոռուպցիոն ռազմավարության նախագիծը, որում, որպես հակակոռուպցիոն ծրագրերի առաջնահերթ իրականացման ոլորտներ, առաջարկել հետևյալ չորս բնագավառները՝
 - ա. կրթություն,
 - բ. առողջապահություն,
 - գ. պետական եկամուտների հավաքագրում,
 - դ. ոստիկանություն՝ քաղաքացիներին ծառայությունների մատուցման մասով:

[Հավելված](#)

10 Ապրիլ 2014

**ՀՀ Վարչապետ
Տիգրան Սարգսյան**